

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

«Յայսմաւորք» առաջին տպագիր օրինակը (1706) եւ դրա մշակութային ժառանգությունը**DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i70.188****ԱՄՓՈՓՈՒՄ**

Սույն հոդվածի նպատակն է բազմակողմանիորեն ուսումնասիրել 1706թ. Կ. Պոլսում Գրիգոր Մարգվանեցու նախաձեռնությամբ տպագրված առաջին «Յայսմաւորք»-ի ստեղծման պատմությունը՝ վերլուծելով ոչ միայն նրա տպագրության նախապատմությունը, խմբագրական առանձնահատկությունները, այլև դրա մշակութային, գրական և հոգևոր համատեքստը, որի շրջանակներում ձևավորվեց այս եզակի ժողովածուն: Հատուկ ուշադրություն է դարձվում «Յայսմաւորք»-ի մեջ ներառված հիշատակարանին և դրա ազդեցությանը հայկական եկեղեցական ու կրթամշակութային կյանքում, Գ. Մարգվանեցու դերին, տպագրական գործընթացի կազմակերպմանը: Հոդվածը կարևորում է նաև տպագրության շրջանում տեքստի վերաիմաստավորման հնարավորությունները. նոր լույս է բացվում հայ հոգևոր ժառանգության պահպանման և փոխանցման տպագրական ուղիների վրա:

Բանալի բառեր և արտահայտություններ. «Յայսմաւորք», տպագրության նախապատմություն, հիշատակարան, Գրիգոր Մարգվանեցի, պոլսահայ տպագրություն, վերարժևորում, հոգևոր ժառանգություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տպագրության դարաշրջանի արշալույսին, երբ բառը սկսեց իջնել ձեռագրի բացառիկությունից դեպի ավելի լայն հասանելիություն, հայ հոգևոր գրականության մի կարևոր ժողովածու՝ «Յայսմաւորքը», նույնպես վերածնվեց

նոր ձևով: Թեպետ ձեռագրական ավանդույթը դարեր շարունակ եղել է հայ մշակույթի հիմնական կրողներից մեկը, տպագրության միջոցով հոգևոր ժառանգության փոխանցումը պայմանավորում էր նոր մշակութաբանական ու գրական փոփոխություններ: Այդ շրջադարձային հանգամանքներից մեկը եղավ 1706 թ. Կ. Պոլսում լույս տեսած առաջին տպագիր «Յայսմաուրքը», որի նախաձեռնողը Գ. Մարգվանեցին էր: Այս գրքի տպագրությունը ոչ միայն նշանակալի դրվագ է հայ տպագրության պատմության մեջ, այլև խորհրդանշում է մի պահ, երբ անհատական նվիրումը, հոգևոր կոչումը և մշակութային առաքելությունը միահյուսվում են մեկ գրքում: Հատկանշական է, որ այս տպագիր հուշարձանի եզրակացության մեջ տեղ գտած հիշատակարանը մեզ է փոխանցում ոչ միայն տվյալ գրքի նյութական ստեղծման պատմությունը, այլև այն հոգևոր շունչը, որով ապրում էր գրիչը: Հոգվածի նպատակն է թափանցել այս եզակի գրքի ստեղծման գործընթացի խորքերը՝ բացահայտելով ոչ միայն դրա տպագրական առանձնահատկությունները, այլև այն մշակութային հենքը, որի վրա կառուցված էր Մարգվանեցու գաղափարական հենքով ուղղորդված նախաձեռնությունը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոգվածը կառուցված է որակական վերլուծության սկզբունքով՝ հյուսված հիմնականում տեքստաբանական մեթոդով: Հիմնարար աղբյուրային հենքը կազմում է 1706 թ. տպագրված «Յայսմաուրք»-ի մեջ ներառված հիշատակարանը, որը ուսումնասիրվել է բովանդակային, լեզվաոճական և վավերագրական տեսանկյուններից: Բացի այդ, ուսումնասիրության շրջանակում իրականացվել է նաև տպագիր «Յայսմաուրքի» ստեղծման պատմամշակութային համատեքստի վերակազմություն՝ հիմնված համադրողական և մեկնաբանական դիտարկումների վրա: Այս մոտեցման արդյունքում հնարավոր է դարձել վերարժևորել ժողովածուի դերը և նշանակությունը հայ հոգևոր մշակույթի շարունակականության և վերափոխման գործընթացում:

Մեթոդաբանորեն կիրառվել են հետևյալ մոտեցումները.

- ՔՆՆԱՐԿՈՒՄ**

12

նոր ժամանակներ: Հոդվածի արդիականությունը պայմանավորված է նաև հայ գրչության և գրատպության փոխառնչությունների, ինչպես նաև տպագրության միջոցով հոգևոր ժառանգության փոխանցման մեխանիզմների բացահայտման կարևորությամբ:

Այսպես. «Յայսմաուրքը»՝ որպես միջնադարյան հայ գրականության մի առանցքային ժանրածն, արտացոլում է քրիստոնեական արժեքների տարածման, նահատակության գաղափարի հիմնավորման և բարոյախրատական վարքագծի ձևավորման գաղափարական համակարգ. Յայսմաուրք կոչումը ծագած է ԺԳ. դարուն, սրբոց վկայաբանութիւններուն սկիզբը սովորաբար կրկնուող «Յայսմ աուր» բառերէն: Սուրբերու վկայութեանց պատմութիւնները շատ կանուխ սկսած էին գրի առնուիլ, այնպէս որ Դ. դարուն Եւսեբիոս Կեսարացի կրնար մեծ հաւաքածոյ մը ձեւացնել զանազան ժամանակներու եւ այլեւայլ վայրերու մէջ նահատակուած վկաներու վարքերը ժողվելով (**Պողարեան Ն. Արք., 1990**): Այս ժողովածուները վկայում են միջնադարյան հայ արձակի բազմաշերտ զարգացումների մասին:

Շարունակելով նշենք՝ «Յայսմաուրքը» անցել է զարգացման երկարատև ուղի: Ըստ ձեռագրական ժողովածուների՝ հայ «Յայսմաուրք»-ները պայմանականորեն բաժանվում են չորս խմբի, որոնք կապված են հետևյալ պատմական գործիչների հետ՝ Տեր Իսրայել, Կիրակոս Արևելցի, Գրիգոր Անավարզեցի, Գրիգոր Խլաթեցի: Այս խմբերի վրա հիմնված ձեռագիր «Յայսմաուրք» ժողովածուները դարեր շարունակ ծառայել են որպես կարևոր ուղեցույց հայ եկեղեցու հոգևոր կյանքի, քարոզչության և ծիսակարգի համար՝ վկայելով գրչության բարձր արվեստի և դրանց լայն տարածման մասին: 17-րդ դարից սկսած՝ տպագրության ներմուծումը այս ժողովածուներին բերեց նոր փուլ՝ ապահովելով դրանց լայն հասանելիությունը: Տպագիր տարբերակները հնարավորություն տվեցին ոչ միայն պահպանելու հին ձեռագրերի բովանդակությունը, այլև ժամանակի պահանջներին համահունչ կատարել խմբագրական փոփոխություններ:

Ինչպես սկզբում նշեցինք, մեր նպատակն է քննության ենթարկել 1706 թ. Կ. Պոլսում Գ. Մարգվանեցու տպարանում տպագրված «Ճառ սրբոց վկայիցն ճշմարտին Աստուծոյ...» վերնագրով «Յայսմաուրք» ժողովածուի հիշատակարանը: Գ. Մարգվանեցին՝ որպես տպագրիչ, գրաձույլիչ և փորագրական արվեստի հիմնադիր, հայ տպագրության պատմության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Նա 17-րդ դարի խոշորագույն տպագրիչներից է Կ. Պոլսում, որտեղ իր գործունեությամբ խթանեց հայերեն տպագիր գրքի տարածմանը ու զարգացմանը: Մարգվանեցու տպագրած գրքերը աչքի են ընկնում մանրակրկիտ տառաձևերով, խնամքով դասավորված էջերով և հաճախ՝ հարուստ զարդանկարներով. «Եւ ամենայն զանազան ծագագրերով փառքերով. և գեղեցիկ կանոններով. և մեծամեծ խորանիւք փտտեալ զարդարանօք զարդարեցի. և պատկերս ըստ իւրոյ պիտոյից՝ նկարեալ իմով և քանդակել փորոածով» (**«Յայսմաուրք», 1706**): Դրանցում հատկապես կարևոր է փորագրական մոտեցումը, որն այն ժամանակաշրջանում դեռևս նորություն էր հայ տպագրության մեջ:

Այսպիսով, Մարգվանեցու գործունեությունը պետք է դիտել որպես խաչմերուկ տեխնիկական նորարարության և ազգային մշակութային ինքնության պահպանման միջև. նրա աշխատությունները ծառայեցին ոչ միայն գիտելիքի փոխանցմանը, այլև հոգևոր ինքնության պահպանմանն ու ամրապնդմանը: Գրիչը գործ ունի միաժամանակ նյութի և հոգու հետ. զարդանախշ գիրը, պատկերը, խորանը, փորագրված պատկերները նրա համար միայն ձևական բաղադրիչներ չեն, այլ Աստծո փառքի խորհրդանիշներ: Վերջում՝ հավատքի միջոցով Մարգվանեցին արդարացնում է սեփական պայքարը՝ զուգահեռելով իր փորձությունները ավետարանական խոսքին. «...մինչ ողորմութիւնն աստուծոյ այց արար զամենայնի՝ եւ հաս կատարումն տպարանիս ենթականգնեալ վերջ տպագրատունս ողորմութեամբն աստուծոյ» (**«Յայսմաուրք», 1706**):

Գ. Մարգվանեցին իր տպագրած «Յայսմաուրք» ժողովածուի հիշատակարանը սկսում է փառաբանումով՝ «Փառք Արարչին...որ ետ

կարողութիւն և եղև ձեռնտու՝ առաջնորդելով 'ի նաւանանգիստնիմ» (**«Յայսմաւորք», 1706**): Այն արտահայտում է Մարգվանեցու՝ Աստծո նախախնամության հանդեպ խոր երախտագիտությունը: Նա վկայում է, որ միայն Աստծո օգնությամբ է կարողացել իր մտադրությունը իրականացնել. «Եւ որ հայցէ գտանէ. և որ բախէ՝ բացի. և խնդրէ՝ տացի նմա» (**«Յայսմաւորք», 1706**): Գ. Մարգվանեցին հղում է Մատթեոսի Ավետարանի 7.7 խոսքին, ինչը արտահայտում է հեղինակի վստահությունը Աստծո աջակցության հանդեպ: Գրիչը նշում է, որ մարդկային տրամաբանությամբ ու հնարավորություններով նման ձեռնարկումն անհնարին կլինէր իր համար, եթե առաջնորդող ուժը չուղղորդէր նրան: Այս խոսքերը մատնանշում են գրիչի հոգևոր ապրումները, որոնք համադրում են անձնական նվիրումն ու աստվածային օգնության հավատը: Նա առանձնացնում է, որ իր վաղեմի երազանքն էր «...վասն սուրբ մատենիս՝ անթիւ վկայիցն որդւոյն աստուծոյ տեսռն մերոյ Յիսուսի Քրիստոսի, արտահանել տպագրութեամբ» (**«Յայսմաւորք», 1706**): Այս ցանկությունը, սակայն, երկար ժամանակ իրագործելի չէր. «Սակս յոլով գիւղ և գաւառս: Անապատս և ի վանս՝ ոչ գոյր՝ զի ընձեռնուին յերեկոյ՝ և կամ յառաւօտեան ըստ պատշաճավոր տեղւոյն ի ժամու» (**«Յայսմաւորք», 1706**):

Գ. Մարգվանեցին գրում է, որ «Յայսմավորքը» որոշ վայրերում ընդամենը անունով է հայտնի եղել, այսինքն՝ մարդկանց համար այն հասանելի չի եղել տեսնելու կամ ընթերցելու առումով: Սա վկայում է տվյալ ժամանակաշրջանի մատենագիտական սակավության և տպագիր գրքի պահանջարկի մասին:

Մարգվանեցին ընդգծում է, որ նախաձեռնությունը եղել է միմիայն իր մտքի արդյունքը՝ առանց արտաքին ուսուցման կամ մասնագիտական միջամտության: Սա ոչ միայն շեշտադրում է ձեռնարկի ինքնուրույն բնույթը, այլ նաև Մարգվանեցու խիզախությունն ու մտավոր նախաձեռնողականությունը: Տպագրության տեխնիկական գործընթացը ձեռնարկել առանց նախորդ փորձի՝ մեծագույն բարդություն էր, ինչն էլ գրիչը ներկայացնում է որպես ծանր հոգեկան ապրումների և տրտմության աղբյուր. «Երբեմն և երբեմն նուաղեր սիրտ իմ. և

ցնդէր միտք իմ. նեղանայր սիրտ իմ. ցամաքէր զօրութիւն իմ: Եւ լոյս աչացս երբեմն նուագիւր՝ և յուշագագնայր ի բարակա հայեցողութեանցս փորուածոյ պատկերաց» (**«Յայսմաուրք», 1706**):

Գ. Մարգվանեցին ներկայացնում է նաև հայ տպագրության մեջ սեփական ձեռքով տեխնոլոգիա ձևավորելու ջանքի մասին: Հատուկ ուշադրության է արժանի պղնձե մայրատառերի պատրաստման գործընթացը, որի միջոցով նա ստեղծում է մետաղաձուլ տառեր՝ տպագրության հիմնական գործիքը: Սակայն տպագրական գործունեության ծանր ընթացքը խաթարվում է անարդարությունների պատճառով, երբ երկու անհատ նյութական շահի նպատակով հափշտակում են հեղինակի մեծ սիրով ստեղծած գեղարվեստական և տեխնիկական ամբողջ ժառանգությունը: Սա կարևոր վկայություն է՝ թե՛ տպագրության պատմության մեջ ձեռնարկների անկայունության, թե՛ այդ դարում գործող անհատական նախաձեռնությունների խոցելիության մասին: Միևնույն ժամանակ, հեղինակը պահպանում է բարոյական վեհություն՝ հրաժարվելով նրանց անունները հրապարակելուց. կրկին սկսում է սկզբից: Գ. Մարգվանեցին քսան տարի անդադար աշխատել է, ապրել խիստ աղքատության մեջ. «Եւ եղև որպէս խեցի, և կամ ճրնճղուկ միայն ի տանիս՝ որդովք իմովք» (**«Յայսմաուրք», 1706**): «Խեցի» և «ճնճղուկ» պատկերները խորհրդանշում են փխրունություն, խոցելիություն և միայնություն:

«Յայսմաուրք» ժողովածուի հիշատակարանում արձանագրված են շատ կարևոր պատմական հիշատակություններ՝ «նախատիպն մեր և շնորհագարդ՝ րաբուն և երջանիկ լուսատուրեալ հոգի» Ոսկան Վարդապետի գործունեության, նրա Հռոմ գնալու նպատակի (այնտեղ սովորեց տպագրական արվեստ), բանտարկվելու, այլադավան քրիստոնյաների՝ հայ անջատողական ախթարամականների կողմից բազմաթիվ նեղություններ կրելու մասին: Գ. Մարգվանեցին ներկայացնում է նաև հայերի ներսում առկա հակասությունների և առաջին տպագրիչների առջև ծառացած վտանգների մասին: Այսպիսով՝ տեքստն արժեքավոր է նաև որպես մշակութային վավերագիր:

Գ. Մարզվանեցու հիշատակարանային խոսքը վերածվում է յուրատեսակ շնորհակալության և հոգևոր վկայության փաստաթղթի: Նրա ինքնապատկերը վեր է բարձրանում սովորական վարպետի կերպարից՝ դառնալով աստվածային ներշնչմամբ առաջնորդվող մշակութային առաքյալ: Տեքստում ընդգծվում է, որ երկար տարիների աշխատանքը ի վերջո հասավ նպատակին՝ ոչ միայն իր շնորհիվ, այլ նաև բարերարների ու նոր գործընկերների անմիջական օժանդակությամբ:

«Յայսմաւորքը» տպագրվել է մի խումբ անձանց նախաձեռնությամբ և աջակցությամբ՝ Ակնա քաղաքի Ապուլէիս և Կարուշլա գյուղերից մահտեսի Ղուկասի, Ալեքսանոսի, Պալիի և պարոն Հակոբի: Մարզվանեցին, գոհ չլինելով միայն հիշատակարանում նրանց ուղղած գովեստներով, գրքի հիմնական բնագրում՝ յուրաքանչյուր հրաշապատումից հետո, տեղադրել է կարճ հիշատակարան՝ խնդրելով ընթերցողին իր անվան հետ միասին հիշել նաև այդ մահտեսներին: Ողջ ձեռնարկը ներկայացվում է որպես աստվածային ներշնչմամբ հաջողված առաքելություն՝ ուղղված ոչ միայն անձնական փրկությանը, այլև «հայկազն ազգի» հոգևոր ուրախությանը. «Անհաս և անպատմելի զօրութեանց՝ հաճեցաւ հեղուլ ի վերա իմ, զխնամս մարդասիրութեան իւրոյ. կալեալ ի ձեռանէ իմմէ՝ և անցոյց ընդ առապարս դժուարութեանց մատենիս՝ և հասոյց՝ ի նաւահանգիստն իմ ցանկալի. ընդ հանուր զուարճութիւն ազգիս հայկազնոյ» (**«Յայսմաւորք», 1706**):

Գրիգոր Մարզվանեցին խոստովանում է իր տեխնիկական ու նյութական դժվարությունները, ինչպես նաև տպագրության մեջ առկա անխուսափելի վրիպակները. «Եւ այսպէս ցաւօք և վշտալիր խոնճմամբ՝ և անպատմելի նեղութեամբ կոշկոճեալ պարապէր անձանձիր՝ ի հոգս սրբագրութեան՝ միով փորձիւ՝ կամ երկիւք՝ ոչ բաւականացեալ: Այլ երիւք և չորիւք՝ դեռ ևս գտանիւր սղալ ինչ» (**«Յայսմաւորք», 1706**): Այդուհանդերձ, նա իր ծայնն ուղղում է ընթերցողներին՝ խնդրելով ներողամտություն և քրիստոնեական կարեկցանք:

Հատկանշական է նաև վերջին հատվածը, որտեղ Մարգվանեցին նկարագրում է հաջողությունը որպես աստվածային օրհնություն՝ համեմատելով իր աշխատանքը թագավորական ձեռագրերի օրհնակով կատարված հղկված տեքստի հետ: Նա դիմում է ոչ միայն հոգևորականությանը, այլ ժողովորդին՝ ընդգծելով, որ տպագրված մատյանը համազգային արժեք է: Նա բացահայտ խոսում է իր մարմնական և հոգեկան տառապանքների մասին՝ «երկունս», «քրտանց հոսում», «բազմաշխատութիւն», որոնք օգտագործվում են որպես գեղարվեստական պատկերներ՝ մարմնավորելու տպագրության երկարատև, բազմափուլ և տանջալից գործընթացը: Այս տիպիկ գեղարվեստական ընդգծումներով հեղինակը, մի կողմից, արդարացնում է հնարավոր թերությունները («ներել իմում տկարութեան»), իսկ մյուս կողմից, խորապես արժևորում է իր կատարածը՝ խնդրելով, որ այն չարհամարհվի որպես «թեթև ինչ իրականութիւն»:

Սակայն նա չի սահմանափակվում միայն անձնական խոստովանությամբ. ձգտում է այս գործը ներկայացնել իբրև նվիրում հայ ազգին: Նրա պատկերացմամբ սա համազգային մշակութային ժառանգություն է, որ պետք է պահպանվի ոչ միայն նյութապես, այլև հոգևոր հիշողության մեջ՝ աղոթքներով հիշելով բոլոր այն մարդկանց, որոնք նպաստել են նրա գործին: Հեղինակը՝ Գրիգոր Դպիրը, մեծագույն մանրամասնությամբ թվարկում է բոլոր այն անձանց, որոնք հոգևոր, նյութական կամ բարոյական աջակցություն են ցուցաբերել սուրբ մատյանի տպագրմանը: Նա իրեն և իր ողջ ընտանիքը (իր որդու՝ Ներսեսի ներգրավումն աշխատանքին տալիս է սրբազան արժեք՝ որդու անձը վերածելով գրքի պատմության մասնակից գործչի) ներառված է տեսնում տպագրության հոգևոր ժառանգության մեջ, ինչը նաև հայ միջնադարյան և նորագույն հոգևոր մշակույթի մաս է կազմում, որտեղ գիրքը որպես հոգևոր կենդանի մարմին հարթում է նաև անցյալի ու ներկայի, մահվան ու հիշողության սահմանները: Դա միաժամանակ անձնավորում է ստեղծագործության պատմությունը և հաստատում տպագրության գործի համայնքային բնույթը, որը հենվում էր բարերարների,

վարժապետների, գյուղական մեծահարուստների ու հայրենասեր անհատների աջակցությամբ:

Աղոթքով ուղեկցվող այս հիշատակարանները տիպիկ են XVII դարի հայկական գրատպությանը՝ վերափոխելով հիշատակումը հոգևոր փոխադարձության, երբ ընթերցողը ոչ միայն ստանում է հոգևոր սնունդ գրքից, այլ նաև պարտավորվում է աղոթել գրքի հեղինակների, տպագրողների և բարերարների համար: Տպավորիչ է նաև Մարգվանեցու համեստ ինքնադիմումը՝ «վերջին ծառա», «անարժան», «տկար» մակդիրներով:

Վերջում Մարգվանեցին անցնում է «Սուլթան Ահմէտի» հիշատակին՝ աղոթելով նրա բարեհաճության և քրիստոնյաների հանդեպ մեղմության համար: Նման աղոթքը բնորոշ է օսմանյան իշխանության ներքո ապրող քրիստոնյա գրողների ոճին: Նա բարիք է մաղթում նաև իր հոգևոր ու քաղաքական հակառակորդներին՝ խնդրելով, որ թագավորության թշնամիներն աղոթքով «նկուն» լինեն՝ խոնարհություն ցուցաբերեն: Այս հորդորն ու աղոթքը փաստում են տպագրիչի՝ ոչ միայն մշակութասեր, այլ նաև մտածող քաղաքացու տեսակը, որն իր հավատքի միջոցով սահմանում է հասարակական ներդաշնակության նախադրյալները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1706թ. Կ. Պոլսում տպագրված առաջին «Յայսմաուրքը» ոչ միայն հոգևոր ժողովածու է, այլև տպագիր մշակույթի զարգացման առանցքային վկայություն: Գրիգոր Մարգվանեցու նախաձեռնությամբ իրականացված այս գործն իր մեջ ամփոփում է ոչ միայն տպագրական հմտություն, այլև խոր հավատամք, նվիրում և ազգային մշակույթի պահպանման ձգտում: Հիշատակարանը՝ որպես տեքստի բաղկացուցիչ մաս, կարևորագույն աղբյուր է՝ վավերագրական, հոգևոր և անձնական մակարդակներում: Այն արձանագրում է ինչպես գործնական մանրամասներ, այնպես էլ հոգևոր ներաշխարհի լարումներ՝ ստեղծագործական տառապանքը վերածելով Աստծուն ձոնված առաքելության:

«Յայսմաուրք»-ի տպագրության գործընթացը վկայում է, թե որքան բարդ էր հայ տպագրության առաջին գործիչների առաքելությունը՝ պայմանավորված նյութատեխնիկական սահմանափակումներով և մշակութային միջավայրի առանձնահատկություններով: Այդուհանդերձ, Մարգվանեցու հիշատակարանը ցուցանում է, որ տպագրությունը ընկալվել է ոչ միայն որպես գեղարվեստական կամ տեխնիկական իրագործում, այլ որպես հավատքի մարմնացում:

Այսպիսով, «Յայսմաուրքը» և դրա հիշատակարանը ներկայացնում են ոչ միայն տպագիր ժառանգություն, այլև բացում են նոր հորիզոններ՝ հասկանալու համար, թե ինչպես է ձևավորվել և պահպանվել հայ ազգային ու հոգևոր ինքնությունը՝ գրի, հիշողության և տպագրության ճանապարհով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Պողարեան Ն. Արք. (1990)**, Ծիսագիտություն, Նիւ Եորք, «Թագուհի Թամսըն» հիմնադրամի հրատ.:
2. **«Յայսմաուրք» (1706)**, Կ. Պոլիս, տպ. Գրիգոր Մարգվանեցու:

REFERENCES

1. **Pogharyan N. Archbishop (1990)**, C'isagitowt'iwn /Tzisagitutyun/, New York: Queen Thompson Foundation Press.
2. «**Yaysmawowrq**» /“**Synaxarion**”/ (1706), Constantinople, Printing House of Grigor Marzvanetsi.

Anna Kostanyan

The First Printed Edition of the “*Synaxarion*” – *Yaysmavurk*’ (1706) and Its Cultural Legacy

Conclusion

Key words and expressions: *Synaxarion* – *Yaysmavurk*’, history of printing, commemorative register, Grigor Marzvanetsi, Constantinopolitan Armenian printing, reinterpretation, spiritual heritage.

The purpose of this article is to conduct a comprehensive study of the history of the first printed edition of the *Yaysmavurk*’, published in 1706 in Constantinople under the initiative of Grigor Marzvanetsi. The study examines not only the historical background and editorial particularities of its publication but also its broader cultural, literary, and spiritual context, within which this unique collection was formed. Special attention is given to the commemorative section included in the *Yaysmavurk*’, exploring its significant influence on Armenian ecclesiastical practices, educational frameworks, and cultural life. Furthermore, the article highlights the pivotal role of G. Marzvanetsi in the conceptualization and organization of the printing process, as well as the editorial decisions that shaped the final text. Emphasis is placed on the potential for textual reinterpretation during the printing period, offering new insights into how Armenian spiritual heritage was preserved, transmitted, and recontextualized through the emerging print culture of the early 18th century.

Анна Костанян

Первое печатное издание «Синаксария» – Яйсмаворк (1706 г.)**и его культурное наследие****Заключение**

Ключевые слова и выражения: Синаксарий – Яйсмаворк, история печати, поминальный список, Григор Марзванеци, армянское книгопечатание в Константинополе, переосмысление, духовное наследие.

Цель данной статьи — всесторонне изучить историю первого печатного издания «Яйсмаворк», опубликованного в 1706 году в Константинополе по инициативе Григора Марзванеци. Исследование рассматривает не только историческую предысторию и редакционные особенности публикации, но и культурный, литературный и духовный контекст формирования этой уникальной коллекции. Особое внимание уделяется памяtnому разделу «Яйсмаворк» и его влиянию на армянскую церковь, образование и культурную жизнь.

Статья подробно анализирует роль Г. Марзванеци в концептуализации, организации и координации печатного процесса, а также редакторские решения, которые определили окончательный вид текста. Значительное внимание уделяется особенностям оформления и структурирования материала, что позволяет проследить как художественные и литературные, так и духовные аспекты издания.

Работа также подчеркивает возможности переосмысления текста в период печати и рассматривает «Яйсмаворк» как средство сохранения и передачи армянского духовного наследия в условиях меняющейся культурной и социальной среды XVIII века. Исследование показывает, что это издание стало не только памятником письменной традиции, но и инструментом укрепления религиозной и образовательной идентичности армянской общины, обеспечивая преемственность духовных ценностей.

Աննա Կոստանյան - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և միջնադարյան, նոր շրջանի գրականություն: Հայաստանի ազգային գրադարանի գրադարանավար: kostanyananna5@gmail.com

Anna Kostanyan - PhD student of the Chair of Ancient and Medieval Armenian Literature and Teaching Its Methodology at the Kh.. Abovyan ASPU. Scientific interests: Ancient Armenian, medieval and new literature. Librarian at the National Library of Armenia. kostanyananna5@gmail.com

Анна Костанян - Аспирант кафедры древней и средневековой армянской литературы и преподавания ее методики в АГПУ им. Х. Абовяна. Сфера научных интересов: Древнеармянская и средневековая, новая армянская литератур. Библиотекарь Национальной библиотеки Армении. kostanyananna5@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 25.05.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 09.06.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 30.12.2025թ.